Աղիտու

Բնակչություն՝ 209

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 111 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 7 կմ,
Կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1650 մ,

Աղիտուն գտնվում է Որոտան գետի ձախ ափին, համարվում է Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկը: Ստ.Օրբելյանի հիշատակմամբ՝ 12-րդ դարում միջին մեծության բնակավայրեր Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Ծղուկք գավառում:
Աղիտու գյուղում է գտնվում Հայաստանի նշանավոր պատմամշակութային հուշարձաններից մեկը՝ 5-7 դար թվարվող մահարձանը: Գյուղի տարածքում կան մ.թ.ա. 2-1 հզմ դամբարանադաշտեր «Կալա-ժառա» ամրոցի հետքերը, քարայրերի համակարգը:
Վերջերս գյուղի տարածքում հայտնաբերվել է կանացի գլուխ և մարմնի ստորին մասեր պատկերող հնագույն արձանի մասեր, որից ենթադրվում է, որ հեթանոսական շրջանում գյուղը եղել է պաշտամունքի կենտրոն:
Աղիտուն, ըստ պատմական աղբյուրներին, բուռն զարգացել և բարգավաճել է 11-րդ դարից մինչև 15-րդ դարի 30-ական թվականները՝ Օրբելյանների իշխանության օրոք: 1437թ. երկրաշարժից հետո Օրբելյան իշխանների հետ Վրաստան են տեղափոխվել նաև բնակիչների մեծ մասը, ինչից գյուղը խիստ տուժել է: Հետագայում (18-րդ դար) այստեղ, աստիճանաբար դուրս մղելով հայերին, բնակություն են հաստատել թուրքերը (1912թ. Աղիտուն ուներ 1384 թուրք բնակիչ): 1918-20թթ. թուրքերը արտագաղթել են, իսկ խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ կրկին վերադարձել:
1988թ. ադրբեջանցիների արտագաղթից հետո, գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայերով:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 164 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 1006գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 250 գլուխ,
- խոզեր՝ 2 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 125:
Համայնքում 20111թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 443 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 5934 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5705 հա, որից՝
- վարելահող՝ 709 հա, խոտհարք՝ 206 հա, արոտ՝ 4089 հա, այլ հողատեսք՝702 հա
- բնակավայրերի հողեր՝ 55 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝21 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 8 հա,

- հատուկ նշանակության հողեր՝ 114 հա,
- ջրային հողեր՝ 28 հա